

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ ԻՆՉ ԿԱՐԳՈՎ ԲԱԶՄԱԾ ԷԻՆ ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔԻՆ

Աւետարանը որոշակի չ'ըսեք թէ Առաքեալները ինչպէս բոլորուած էին Յիսուսի շուրջը, վերջին ընթրիքին. սակայն ուշագիւր ընթերցում մը աւետարանական դէպքերուն և ակնարկութիւններուն՝ մեղի ենթադրել կու տայ անոնց կարգը:

Լակրանտ իր Համարաբառին եւ Ռիչիոթթի իր հեղինակած Յիսուսի Վարքին մէջ կ'իտարարէր սեղան մը կը Համարին, արտաքուստ շուրջանակի բաղմականներով: Ընդհակառակն, Ֆեռնանտէզ ու Վիքենհաուզէր ուղղանկիւնի սեղանի մը մասին կը խօսին, երկար, առանց թիկունքի, երեք բաղմոցներով: Ամէնքն ալ կ'անտեսեն նախնական ձեւը, որ է Ելից դրքին նկարագրութիւնը, կանգուն՝ ոտքի վրայ ուսել զատկական դառնը:

Կարծիքի դանդաղանութիւն կը նշմարուի, դարձեալ, ուսումնականներու մէջ, երբ կը սկսին որոշել Յիսուսի, Պետրոսի, Յովհաննէսի եւ Յուդայի դրաւած տեղերը, միւս բաղմականներուն վրայ Աւետարանի մէջ որ եւ է ակնարկութիւն չ'ըրտնուելուն:

Լակրանտ հետեւեալ կարգը կը դնէ. Յովհաննէս, Յիսուս Յուդա, Պետրոս. իսկ Ռիչիոթթի եւ Ֆեռնանտէզ՝ Յուդա, Յովհաննէս, Յիսուս, Պետրոս: Սակայն չ'որս աւետարանագիրներուն ուշագիւր քննութիւն մը մեզ կը ստիպեն որ տարակուսինք այս կարգերուն նկատմամբ յայտնուած կարծիքներուն վրայ:

Հետեւելով Լակրանտի Համարաբառին, Յիսուս աշակերտներուն դահնտորութիւնը կը յանդիմանէ. ուստի, Յիսուսի այս յորդորէն ետք, Առաքեալները թողուցին նախաթողութեան հարցը: Կը թուի թէ վէճը Յուդա հանած ըլլայ, ու

պատասխանն ալ լաւ հասկցած չ'ըլլայ, ընթրիքի ատեն Վարդապետին մօտ դրտնուելով հանդերձ:

Զի տեսնուիր որ ոտնուան նախ Պետրոսէն սկսած ըլլայ, ինչ որ Ռիչիոթթի կ'ախորժի ենթադրել. այս կէտը կը լուսաբանուի երբ համարինք թէ Յիսուս լուսացումը սկսած ըլլայ սեղանին ծայրէն կամ իր ամէնէն մօտ դառնուող սեղանակիցէն, կամ ենթադրելով որ Պետրոս Տիրոջ քովը բաղմած էր:

Եւ երբ կը հասնի վայրկեանը որ Յիսուս յայտնէ մատնութիւնը, հարկ էր որ Յուդա Յիսուսի քովն ըլլար, որովհետեւ մի եւ նոյն սկաւառակէն կ'ուտէր: Նկատի ունենալով որ Յիսուս իրը ընտանիքին զլուխ՝ կեդրոնը բռնած էր, եւ սկաւառակ մը երեք հոգիէ աւելի ծառայելու չէր բաւեր, կը հետեւի որ Յիսուսի պնակէն կ'ուտէին Յովհաննէս եւ Յուդա: Իսկ երբ Յիսուս ցած ձայնով Յուդայի կ'ըսէ «Դու ասացեր», որոշ է թէ երկու առաքեալներէն ո՛րն էր մատնիչը: Յովհաննէս դուրսակելով Յիսուսի դործելու կերպէն, թէ մատնիչը պէտք էր յայտնուեր, դադարէր իրեն կը պահէ, դուցէ խափանելու համար Պետրոսի զայրոյթը. ուստի, ինչպէս պիտի տեսնենք, Յովհաննէս տեղ չէր զբաւեր Յիսուսի եւ Յուդայի միջեւ:

Յովհաննէս զլուխը կը հանդէսէնէ Յիսուսի գիրկը: Եթէ Պետրոս Յիսուսի հետ խօսելու համար, Յովհաննէսի ակնարկելով միայն պիտի կարենար, ուրեմն որոշ է որ Յովհաննէս երկուքին մէջն էր: Արդէն, ինչպէս ըսինք, Յիսուս տարիքի կարգը սկսած էր ջնջել. հետեւաբար Յովհաննէս Յիսուսի հետ խօսելու համար՝ Պետրոսի ակնարկութիւնը ստա-

նալէն ետքը, «ետեւ կը ծռի Յիսուսի դըրկին վրայ», ինչպէս լաւ կը մեկնէ Վիքենհաուզէր:

Վարդապետն ու Յուդա իրարու մօտ էին, որովհետեւ Յիսուս պատառը մատնիչին կու տայ. եթէ Յիսուս այս բանը կատարելու համար ոտքի ելլելու ըլլար, ամէնքը պիտի անդրադառնային. իսկ Պետրոս իր հարցումին պատասխանը չ'ընդունելով, ըսել է թէ Յիսուսի ըրածին նշանակութիւնը չ'հասկցաւ: Հետեւաբար չորս բաղմականները հարկ է որ նստած ըլլային հետեւեալ կարգով. Պետրոս, Յովհաննէս, Յիսուս, Յուդա. կը թուի թէ Վիքենհաուզէր ալ լռելեայն այսպէս կը հասկնայ:

Այս մեկնութեան, սակայն, կարծես կը հակառակի Յովհաննու Աւետարանին «Սիմոն Պետրոս կ'ակնարկէ Յովհաննէսի» խօսքը: Ակնարկել, այսինքն աչքով նշանընել, կը կատարուի ուշագիւրութիւնը դարձնելու համար մէկու մը՝ որ իր քովը չէ, ինչպէս կը համարի Ռիչիոթթի: Յուդա ինչպէս չ'ըսէր որ հոս դործածուած է եւ ակնարկել կը թարգմանուի, կրնայ նշանակել «մօտեցիր որ լսես». եւ իրօք Սիմոն Պետրոս, որպէս զի ուրիշէ չ'ըսուի, կը ծռի գէպի Յովհաննէս՝ որ կը թընած էր Փրկիչին գիրկը:

Ուրիշ խնդիր մ'ալ. Առաքեալները ընթրիքի ատեն իրենց ճա՛ր բաղմակին վրայ արդեօք յեցած էին, ինչպէս կը համարուի ընդհանրապէս: Հոս, հարկ է յիշեցնենք ինչ որ Եռետիքա Քորնելիա բժիշկը զիտողութիւն կ'ընէ Յիսուսի վանականութիւնը առիթով, թէ Հրեաները ձախ ձեռքերնին կը դործածէին սեղանի համար, աջին վրայ կոթնելով: Հնախօսութիւնը կարծես կ'արդարացնէ այս կարծիքը, վասն զի Կալիլիստեան գետնադամանի Ս. Հաղորդութեան նկարը՝ բաղմականները աջի վրայ յեցած կը ներկայացնէ Հացի եւ Զուկի սեղանին շուրջ:

Արդեօք մեծանուն նկարիչները վերջին ընթրիքի իրենց պատկերներուն մէջ կը համաձայնե՞ն վերոյիշեալ գիտնականներուն՝ առաքեալները դասաւորելու հար-

ցին մէջ. քննենք քանի մը գլուխ դործող նկատուած նկարները:

Իտալական Թրեքքանի համայնագիտակ բառարանը, Էմիլիոս նահանգը նկարագրելուն, կը խօսի նոյն դասաւոր քաղաքներու մէջ դառնուած արուեստի հոգակաւոր յիշատակարաններու, նկարներու եւ արձաններու վրայ. ասոնց մէջ կը ներկայացնէ նաեւ երկուստասներորդ դարու խորաքանդակ մը Վերջին ընթրիքի, անձանթ հեղինակէ, ուր Յիսուս եւ աշակերտները կանգնած են այն պահուն՝ երբ պատառը կու տայ Յուդայի. կեդրոնը կեցած է Վարդապետը, Յովհաննէս՝ աջակողմը, զլուխը Յիսուսի կուրծքին վրայ յեցած, եւ մատնիչը՝ մօտ Յովհաննէսի (Հտ. ԺԳ. էջ 910):

Ֆրենցէի Սան Մարքոյ Թանգարանին մէջ կը գտնուի Փրա Անճելիքոյի (1387-1455) «Առաքեալներու հաղորդութիւնը» կոչուած նկարը: Ընդարձակ սրահ մը, երկու փոքր պատուհաններով, որոնք աւելի իրը դարձ քան լուսաւորելու կը ծառայեն. կողմնակի ջրհոր մը եւ ճախարակի շղթայէն կախուած դոյլ մը: Երկար սեղանին առջեւ կանգուն ութ աշակերտներ, Յիսուսի ձեռքէն կ'ընդունին երկնային հացը. սեղանին մէկ կողմը ծուներ դըրած է, հաւանօրէն, Տիրամայրը. իսկ միւս կողմը կը տեսնուին չորս առաքեալներ՝ նոյնպէս ծնրադիր. սեղանին առջեւ չորս աթոռակներ կ'ընդմիջեն միակերպութիւնը: Պարզ է սպասը, հազիւ քանի մը բաժակներ. առաքեալներու դէմքին վրայ կը կարգացուի յարգանք ու հաւատք. ամէնքն ալ լուսապսակով. իսկ Յուդա դուցէ այն է՝ որու դէմքը ծածկուած է իր մօտ ծնրադրողին ետեւ (Հտ. Գ. էջ 292):

Նոյն հեղինակին ուրիշ մէկ նկարը, դարձեալ «Առաքեալներու հաղորդութիւնը» տիտղոսով, նոյնպէս Ֆրենցէի Սան Մարքոյ Թանգարանին մէջ, կը ներկայացնէ երկու սիւններուն ընդմէջէն միմեկին սրահ մը. առաքեալներուն դէմքն ու դունդեղ հագուստն է որ կը լուսաւորէ միջավայրը: Աշակերտներէն վեցը կանգուն

կեցած են Յիսուսի երկու կողմը, սեղանին առջեւ, իսկ միւսները ծունր դրած, երկուստեք երեք երեք, Վարդապետը անոնց կը բաշխէ սուրբ հացը: Ամէնքն ալ լուսապսակով են, միայն մէկուն գլուխը ծածկուած է սիւնին ետեւ գտնուելով. երկու են աթոռակները:

Նոյն Համայնագիտակը կը ներկայացնէ Անտրէա տէ Գասթանիայի (1423-1457) մէկ նկարը, որ Ֆիրենցէ կը պահուի (Cenacolo di S. Apollonia): Չարդարուն վերնատան կեդրոնը ղեկավարած է սեղան մը, բաւելու չափ Յիսուսի եւ իր առաքեալներուն, որոնք բազմած են Վարդապետին երկու կողմերը, եւ Յովհաննէս Հանգեցուցած է գլուխը Տիրոջ ձախ բազուկին վրայ. ամէնուն գլուխներուն վրայ կայ լուսապսակ, մինչ ղիմադիծերը տիրութեան եւ ցաւի արտայայտութիւնն ունին: Յուդա՝ դէմ առ դէմ Յիսուսի, պատրաստ է ձեռքը սկաւառակ մխելու (Հտ. Թ. էջ 201):

Ֆիրենցէի մէջ է դարձեալ Փերուճինոյի (1445-1523) Վերջին ընթրիքը, գծուած Ֆրիւնիոյի նախկին վանքին համար: Ծրբեղ վերնատուն մը, սիւնադարձ կամարակապի մը մէջէն կը տեսնուի հեռաւոր ծառադարձ տեսարան մը. Յիսուսի աջ ու ձախը նստած են տասնեւմէկ առաքեալներ, ամէնքն ալ լուսապսակով. հանդարտ ու խաղաղ արտայայտութիւն՝ յայտարար անոնց անմեղութեան: Յովհաննէս ինկած է Յիսուսի գիրկը, միայն Յուդա՝ առանց լուսապսակի՝ նստած Վարդապետին դէմը, կողմնակի ցոյց կու տայ թխադոյն երեսը, եւ չունի միւսնեւրուն դէմքի պայծառութիւնը:

Կիրլանտայիայի (1451-1495) Վերջին ընթրիքն ալ, որ Ֆիրենցէի թանգարանին մէջ ցուցադրուած է, նման է Փերուճինոյի նկարին: Յուդա նստած է նոյնպէս Յիսուսի դիմաց, առանց լուսապսակի: Նախընթացին պէս, ասոր մէջ ալ Յովհաննէս՝ Յիսուսի ձախակողմը, հազիւ տեսանելի, գլուխը հանգեցուցած է Վարդապետին լանջքին: Ծրբեղ է սրահը, երկու կամարակապներով, որոնց մէջէն

կը տեսնուին նարնջենիներու ծառատունկեր: Մութ է, առաջացած ըլլալով վերջալոյսը. սակայն սրահը դեռ կը լուսաւորուի օրուան բնական լոյսով: Անխռով են առաքեալները, բազմած երկուստեք Յիսուսի աջ ու ձախ կողմը. անոնք իրենց սրտին խորը չունին որ եւ է խայթ:

Իտալացի համբաւաւոր պատկերահանները, Վերջին ընթրիքը ներկայացնելու ատեն, կարծէք կը գիտարարէին Յուդայի յարմար գիրք մը գտնել, խուսափելով ցայտեցնելու մատնիչին ներքին զգացումները, կամ թէ չհեռանալու համար Աւետարանի բացատրութիւններէն: Ասոնց մէջ սակայն նշանաւորագոյնը՝ Լէոնարտոյ տա Վինչիի (1452-1519) գծած Միլանոյի Սանթա Մարիա տելլէ Կրացիէի նախկին սեղանատան համար Վերջին ընթրիքն է: Չորս խումբի կը բաժնէ առաքեալները՝ Վարդապետին երկու կողմերը. Յովհաննէսի կ'ընծայէ աջակողմը, եւ քովը կը նստեցնէ մատնիչը, ձեռքը տալով քսակը՝ երեսուն արծաթի, մատնութեան դիմը, ասով՝ ամէն տարակոյս փարատելու համար. ղիտողին մտքին մէջ: Առաքեալներուն խռոված ու շփոթ կացութեան մէջ՝ Յուդա անտարբեր գիրք մ'ունի. մինչ միւս աշակերտները երեք երեք բաժնուած կը յայտնեն սարսափներն, ու մատնիչին անունը կը փնտռեն:

Թինթորեթթոյ ալ Վենետիկի Սան Մարքոսուրա եկեղեցիին մէջ ունի Վերջին ընթրիքի նկար մը: Սրահը չունի նախորդներուն չքեղութիւնը. առաքեալներէն դատ կան երկու կիներ, մէկը՝ կը ծառայէ, ձեռքը բաժակով մը, միւսը՝ զրադած է իր երկու փոքրիկներով. կայ նաեւ շնիկ մը: Առաքեալները, մաս մը ոտքի ելած եւ մաս մը աթոռակներու վրայ՝ շփոթ վիճակ մը կը յայտնեն «Չեղմէ մէկը պիտի մատնէ զիս» խօսքին համար: Յուդա կը զանազանուի միւս աշակերտներէն՝ որովհետեւ գլուխին կը պակսի լուսեղէն պսակը:

Վենետիկ ծնած է, 1696ին, Ճան Պաթթիսթա Թիեփոլոյ. իր բազմաթիւ նկարները կը զարդարեն ծննդավայրին ու չոր-

ջակայ քաղաքներու եկեղեցիներն ու պալատները. մինչ Վերջին ընթրիքը Լուվրի մէջ ցուցադրուած է: Վերնատունը չորս սիւններով ընդարձակ սրահ մըն է. երկու արձաններ, կողմնակի խորշերու մէջ եւ բարձր դուռ մը, վսեմութիւն կու տան սրբավայրին: Երկայն սեղանին շուրջը բազմած առաքեալներն իրենց հաղուստին եւ կեցուածքին զանազանութեամբ՝ շարժուն կենդանութիւն կ'ընծայեն պատկերին: Սակայն խռոված են ամէնքը մատնիչի մը պատճառով, զո՛հ՝ արծաթասիրութեան: Սեղանին վրայ եւ գետինը չեն պակսիր սկաւառակներ ու ղիւնիլի ամաններ, նոյնիսկ չունը. եւ ղիւնիլին չէ որոշել մատնիչ Յուդան:

* * *

Կ'արժէ քիչ մ'աւելի մանրամասն նկարագրել Ս. Ղազարու վանքի ճաշարանին Վերջին ընթրիքը, զորք Սիկիլիացի Անթոնիոյ Նովելլիի, որ Հռոմ եկած էր՝ նկարելու համար իրեն յանձնարարուած այդ պատկերը: Միաբանութեանս դիւանին մէջ պահուած 1780-81 տարիներուն մէջ իր դրած տասներեք ինքնագիր նամակները կու տան մանրամասնութիւններ, զորս կ'ամփոփեմ: 1780ի Յուլիս 15ի գրութեամբ կը հաղորդէ թէ առաջացած է Վերջին ընթրիքի նկարը, ընտրելագոյն ներկերով, միակտուր կտաւի վրայ: Աւարտելէ ետք պիտի ցուցադրուի, կ'ըսէ, Հռոմի վենետիկեան զեսպանին պալատին սրահներէն մէկուն մէջ, որով ժամանակ կ'ունենայ չորնալու, որպէս զի յետոյ ուրբելով՝ սնտուկի մէջ ամփոփուած՝ Ս. Ղազար ճամբուի. տարակոյս կը յայտնէ թէ անձամբ պիտի կարենա՞յ դալ տեղաւորելու համար: Հետեւած եմ, կը յաւելու, Աւետարանին. պատկերը լուսաւորուած է սրահին կեդրոնը կախուած չորս ճրագարանով կանթեղէ մը: Փորձը կատարեցի, կ'ըսէ, ղիւնիլի ատեն, յարգարելով սեղան մը, եւ նստեցնելով նորընտիր առաքեալներ, ղիտելու համար լոյսին արդիւնքը եւ ստուերները, որպէս զի իրականին համապատասխանէ: Տասներկու

առաքեալներէն զատ, քանի մը ծառաներ ալ դրած եմ, կը յաւելու:

Մեծ մտահոգութիւն եւ ճիգ թափել տուաւ ինծի, կ'ըսէ Ա. Նովելլի, Յիսուսի ղիմագիծը, արտայայտելու համար աղնուութեան հետ նրբութիւնը, միացնելով աստուածայինը եւ մարդկայինը, եւ ուր տեսանելի ըլլար տիրութիւնը՝ որ դրաւէր Յովհաննէս առաքելի ուշադրութիւնը, իյնալու համար Յիսուսի լանջքին վրայ՝ հարցնելու թէ ո՞վ էր մատնիչը. մինչ Յուդա, կասկածոտ ու մեղամաղձոտ դէմքով, ցոյց տար սեւ հոգին: Իսկ միւս առաքեալները հծծելով իրարու հետ, Վարդապետին կատարած յայտնութեան վրայ, նշանակալից գիրք ստանան, ինչ որ գիտարին է արտայայտել նկարին մէջ: Շատ աւելի գիտարին է Փրկչին կեցուածքը, այնքան որ երեւելի Լէոնարտոյ տա Վինչիի Միլանոյի իր Վերջին ընթրիքի նկարին մէջ չկարենալով Յիսուսի դէմքին տալ այդ արտայայտութիւնը՝ որ մտքին մէջ կ'որոշար, յուսարեկ՝ կիսկատար թողոյց, սքանչելի նկարելով մընացած բոլոր մասերը: Այդ նկարին մէջ Յովհաննէս Յիսուսի ձախակողմը բազմած է, ամէնէն պատուաւոր տեղը, արեւելեան սովորութեան համաձայն. իսկ Պետրոս՝ աջ կողմը. այսպէս խորհած ու նկարած է նաեւ Ռափայէլ մեծ նկարիչը՝ Վատիկանի պալատին մէջ: Ան ալ իր պատճառն ունի, ինչպէս որ Լէոնարտոյ տա Վինչի ըրած է, որպէս զի կարենայ ձեռք մխել Քրիստոսի սկաւառակին մէջ, եւ Տէրն մեր պատառը տար մատնիչին՝ որ պէտք չէր հեռու ըլլալ Քրիստոսէ:

Որքան կարելի էր ուսումնասիրած ու աշխատած եմ, կը շարունակէ, բացայայտել աստուածութիւնը եւ մարդկութիւնը Յիսուսի դէմքին վրայ, որ արտափայլէ ներքին խռովքը. նոյնը նաեւ Յովհաննէս առաքելի կեցուածքին. և Յուդայի նենգութիւնը՝ ծնօտը ձեռքին մէջ, կատկածոտ ու նենգ՝ որ երեսէն յայտնուի խեղդամահ վախճանը, ղիմագիծ մը սոսկալի. նոյնպէս նաեւ միւս առաքեալներուն շփոթութիւնը:



ԱՆԹՈՆԻՅ ՆՈՎԱԵԼԻԻ - Վերջին ընթրիք (Ս. Գալար, Սեդանտուն)

Ուրախ տրամադրություններով կը պատմէ, յաջորդ թղթակցութեամբ, Նովելլի, թէ Հռոմի մէջ շատեր գացած ու տեսած են իր այս նկարը, եւ Պորկեդէ իշխանը իր պալատին մէջ սրահին համար յանձնարարած է նկարել՝ կեդրոնական մեծ բոլորակ եւ շուրջը փոքր ձուլածեւ չորս պատկերներ. եւ թէ Սրբազան Քահանայապետը ու Քիճի իշխանը եւ մեծամեծներ պատուած են իր այս գործն իրենց այցելութեամբ: Կան ուրիշ մանրամասնութիւններ Ս. Ղազարու վանատան ճաշարանին համար նկարուած այս վերջին ընթրիքին ծրարումին, առաքումին եւ շրջանակին համար՝ յաջորդ թղթակցութիւններուն մէջ, եւ թէ վճարումը կատարուած է մասամբ Յովհաննէս Սեղբոսի եւ մասամբ Էրքովէ Պոնապոլի անունով անձի մը միջոցով, չկարենալով Նովելլի մինչեւ վենետիկ գալ:

Կը փակեմ հաւաքումս, նմոյշ մըն ալ հայ ձեռագիրներէն քաղելով: Վալթէր Պոնաթոյ, Փատուայի համալսարանէն, 1955ին իր աւարտաճառը գրելով Ս. Ղազարու Մատենադարանին թ. 1865 Աստուածաշունչի մանրանկարներուն վրայ, եւ խօսելով վերջի ընթրիքի առաքելուն-

րուն կարգին նկատմամբ, հետեւեալ գիտողութիւնը կ'ընէ: Առաքելներուն թիւը հոս իննի վերածուած է, որոնցմէ չորսը կարելի է որոշել, Յուդա, Պետրոս, Անդրէաս եւ Յովհաննէս: Յուդան պէտք է ան ըլլայ՝ որ աջակողմը՝ ծայրը նստած է, այնուհանդերձ որ զանազանող ոչ մէկ ընկալեալ դիրք բռնած ըլլայ, ձեռքը երկնցուցած կամ սկաւառակին մօտեցուցած եւայլն: Ընդհակառակն, զուլսը ետ դարձուցած՝ կարծես տեղէն ձանձրացած, դուրս ելլելու մտահոգութիւնն ունի, մտքին մէջ որոճածը դորձադրելու: Իսկ Յիսուս ըսելու վրայ է. «Չոր ինչ առնելոց ես, արա՛ վաղվադակի», եւ իրօք, «առեալ զպատառն ել»:

Յիսուսի աջակողմը նստող երկու ձեռունները, զուցէ Պետրոս եւ Անդրէաս ըլլան, միշտ միասին յիշուած Աւետարանին մէջ. եւ ընդհանրապէս միասին ներկայացուած՝ աւանդական պատկերազրութեան մէջ. արդարեւ ձեռագրիս մանրանկարներուն ուրիշ չորս տեսարաններուն մէջ միասին կը գտնուին (Տախտակ Ժէ եւ Ժը): Յովհաննէս անտարակոյս Քրիստոսի ձախակողմը նստող անմօրուս երկտասարդն է. զուլսը կռթնցուցած է

Յիսուսի կուրծքին վրայ, համաձայն իր Աւետարանին՝ որու հետեւած են շատ մանրանկարներ, այլ ձեռքը սիրողաբար Յիսուսի բազուկին վրայ դրած՝ կը խօսի ընտանեւոր, հարցնելով թէ ո՞վ է մատնիչը:

Յիսուս եւ առաքելները ընկողմանած չեն, ըստ հին սովորութեան, այլ բազմած, ինչպէս որ արեւելքի արուեստագէտները սովոր էին ներկայացնել իննեւորդ դարէն եւ դուցէ անկէ ալ առաջ. վկայ են Ս. Մարկոսի սիւներուն փորագրութիւնները, որոնք վեցերորդ դարու

կը համարուին: Արդ, իրարու քով նստողներուն կարգը, յատուկ այս նիւթին մէջ, կարեւոր տարր մըն է՝ հաստատելու համար, որքան կարելի է, թէ ո՛ր աւանդութեան կը հետեւի, զետեղելու համար ծագումը եւ ազդեցութիւնը բնական միջավայրին մէջ: Ըստ Milletի, որ իր ուսումնասիրութիւնը կատարած է հետեւելով առաւելապէս այս ուղղութեամբ, չորս պէտք են ըլլալ աւանդութիւնները. յունական, ռաւեննական, կապադովկեան եւ բիւզանդական:

Հ. ՔԵՐՈՐԷՅ Ա. ՉՐԱՔԵԱՆ

ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԵՐՈՒՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐԸ

Ծնունդ

Ծննդեան տօնին հաստատութիւնը Liber Pontificalisին համեմատ՝ պէտք է վերադրել Տելեփորոս Պապին (125-136?) . բայց այս կարծիքը այսօր բոլորովին լքուած է իրր անվաւեր եւ յետաժողովին անհամ կը յիշատակէ Ծննդեան տօնը, թերեւ 2. դարէն սողին:

Դանիէլի մեկնութիւնը, որ կը վերագրուի Ս. Հիպոլոյիտոսին († 235), իրր առաջին անգամ կը յիշատակէ Ծննդեան տօնը Դեկտեմբեր 25ին: Բայց քննադատութիւնը ասոր վկայութիւնն ալ տարակոյսի կ'ենթարկէ:

Միւս կողմէ դիտենք թէ Կղեմէս Աղեքսանդրացին († 215ին չուրջ) կը ծագէր անոնք որ «ոչ միայն չէին զոհանար Յիսուսի ծնած տարիով, այլ չափազանց հետաքրքրութեամբ կը ջանային փնտռել եւ գտնել նաեւ օրը» (Stromat. PG. VIII, col. 888): Իրապէս ալ Արեւելքի մէջ կային ոմանք, որ Յիսուսի Ծնունդը կը դը-

նէին Մայիս 20ին, կամ 20 Ապրիլին, եւ կամ 17 Նոյեմբերին:

Այս բոլոր տեղեկութիւնները կը հաստատեն որ Ծնունդի տօնը, այդ դարերուն, ղեռ դոյութիւն չունէր գէթ իրր ծիսական տօն:

Առաջին վաւերացումը, որ կը յիշատակէ Դեկտեմբեր 25ը իրր Ծնունդի թուական՝ Հռոմի մէջ, Depositio Martyrum եւ կամ ծիսական Calendarioն է 336ին, կոչուած Filocaliano, իր հեղինակին (Dionisio Furio Filocalo) անունով:

Այս վաւերացումը կը հաստատուի Լիբերիոս Պապին ճառով, զոր խօսած է Ս. Պետրոսի մէջ, 353ին, Ս. Ամբրոսիոսի Մարչելլինա քրոջ քղառութեան առիթով: Այդ օրը (Դեկտ. 25) կոյսերը քօղ կ'առնէին, գէթ մինչեւ Դ. դարը:

Ծննդեան տօնը, ուրեմն, բուն Հռոմէն ծագում առած (հռոմէական) տօն մը կը թուի, եւ Հռոմէն անցած պէտք է ըլլայ Ափրիկէ, եւ ապա Արեւելք: